

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

## Ի՞ՆՉ ԱՐԲԵՑՈՒԹՅԱՄԲ

Միսաք Մեծարենցի ծննդյան իննսունամյակն էր 1976-ին: Անակնկալի զգացողություն էր ինձ խռովել հանկարծ, զարմանքը. հավերժ պատանի Մեծարենցը իննսունամյա ծերունի՞, եթե ողջ լիներ: Բայց նաև՝ ընդամենը իննսո՞ւն: Վեց տարի առաջ պատկառանքով ու երկյուղած խանդաղատանքով համբուրել էին Մարտիրոս Սարյանի նահապետական ձեռքը՝ նրա իննսունամյակին: Մեծարենցի մահից անցել էր համարյա յոթանասուն տարի, բայց նրանից, ուրեմն, վեց տարով մե՞ծ է եղել Սարյանը, որի ամբողջ երկարամյա ստեղծագործությունը իր ոգով այնքա՞ն մեծարենցյան է՝ նույն բանաստեղծական աշխարհը գեղանկարչության լեզվով: Ու նաև այդ օրերին, ուրեմն, իր իննսունն էր բոլորել իմ պատանեկության սիրելի ուսուցիչը՝ իր խոր ծերությունը Փարիզում ապրող մեծ մանկավարժ Պողոս Գեվորգյանը, որ Մեծարենցի տարեկիցն էր և Պոլսում նրա դասընկերն է եղել ժամանակին: Տասը տարի առաջ եկել էր Երևան. մի առիթով հիշել էր իրենց աշակերտական կյանքը և պատմել, թե ինչպես Միսաքն իր առաջին բանաստեղծությունների տետրակը վարանոտ ներկայացնում էր իրենց ուսուցիչ Հրանտ Ասատուրին, պատմել նույնիսկ, թե ինչպես բակում խաղում էին միասին և ինքը լինում էր ուշխույժ Միսաքի խաղընկերը:

Իսկ իմ սերունդը ավելի քան կես դար, դեռ դպրոցական նստարանից, Մեծարենցին գիտե որպես փայլուն աստղ մեր դասականների համաստեղության:

Տարօրինակ ու խորհրդավոր են թվում սերունդների ոգեկան ժամանակի այս տարբեր չափումները՝ օրացուցային ժամանակի անշեղ, անտարբեր հոսքում: Բայց գուցե դա, մի ուրիշ տեսանկյունով, այն նույն խորհրդավորությունն է, որ զգում ենք, երբ կյանքի զորությամբ լի՝ փորձում ենք ըմբռնել մահվան առեղծվածը և հանգում անմահության ավելի ևս առեղծվածային գաղափարին, որ միշտ էլ հուզել է մարդուն: Իննսուն տարին երկարակյաց կյանքի տևողություն է, բայց Մեծարենցը ապրեց դրա միայն

քսաներկու տարին: Իսկ այդ կարճ ժամանակամիջոցը, մի ծնունդի և մահվան միջև ամփոփված, հանճարի ոգեկան չափումով դարձավ անմահություն, որ անցյալի մեջ խորանում է մինչև «Երկներ երկին և երկիրի» արեվապաշտ աշխարհազգացողության ոլորտները, իսկ ապագայի մեջ...

Այսօր արդեն անկարելի է տարակուսել, որ Մեծարենցը միշտ էլ, քանի կյանքն ու ոգին կծաղկեն այս երկրագնդի վրա, հրաշալիորեն կենդանի ապրում կլինի բոլոր նրանց համար, ովքեր բախտ կունենան հաղորդվելու նրա ստեղծած բանաստեղծական աշխարհին, որ իբրև երջանկության անշեջ լույս կմնա նրանց հոգում:

Ամենալայն ու ամենախոր առումով լիակատար բանաստեղծական աշխարհ՝ սկսած առաջին քերթվածներից, որոնք ամփոփված են «Բաբախումներ» վերնագրի տակ, մինչև կատարյալ գլուխգործոցների մշտադալար բուրաստանը, որի վերևում կարծես ծիածանվում է մի ընդհանուր վերնագիր՝ «Ի՞նչ արբեցությամբ»: Չգիտես ինչու ոմանք «թույլ» են համարել այդ առաջին բաբախումները, որոնց մեջ արդեն կանխահաս տաղանդի սիրտն է տրոփում, բայց կարելի է հասկանալ այդ պայմանական դծվարահասկանալությունը, որ Մեծարենցին համեմատում է Մեծարենցի հետ ու շվարում է զարմացած, շշմում, թե ինչպես հանկարծ, մեկ օրից մյուսը, տաղանդի կոկոնից հորդեց շողշողուն հանճարը, այն էլ լիովին հասուն, անթերի արվեստով:

Ոչ մի արտաքին-նկարագրական տող, ոչ մի ավելորդ-անկենդան բառ, ոչ էլ որևէ ոճական շպար, որ քերթողական արվեստի լոկ ձևական մտահոգություն մատնի: Ամեն մի քերթվածի մեջ, ծայրեծայր, աստվածատուր բանաստեղծության հրաշագործ ոգին է շնչում: Բառերը թրթռում են կյանքով, ծաղկում են, աճում կենդանի էակների նման: Եթե երբեմն հազվագյուտ ու փնտրված են թվում, այդ նշանակում է, որ արտահայտված զգացումը կամ միտքն է շատ նուրբ կամ խորունկ: Տող առ տող, քերթված առ քերթված ստեղծվում է մեծարենցյան աշխարհը, որ իր պանթեիստական ապրումներով տիեզերքն է ընդգրկում, ստվերից դեպի լույսը ձգտելով միշտ: Տրտմություններից անգամ ուրախություն է ցայտեցնում Մեծարենցը, իսկ ուրախություններն ապրում է իբրև ցնծագին արբեցություն: Եվ հասնում է կենսասիրության ու մարդասիրության ամենապայծառ բարձունքին: Դա ոչ թե մակերեսային, քաղցրմեղցր, այլ անդունդ տեսած կենսասիրություն է, չարը ճանաչած մարդասիրություն: Գիտակից, ամբողջական կենսափիլիսոփայություն է դա, որի խորքում բնավորության, նկարագրի ամբողջականությունն է պարագծվում: Ինքը մահվան շեմին կանգնած, նեղմիտ ու չարակամ քննադատներից հալածվող, բայց իր ճշմարտության ուժով նրանց դաս տվող պատանի բանաստեղծ, իր ժողովրդի տառապանքներն էլ խորապես տեսնող հայ մարդ՝ նա շատ լավ գիտե կյանքի դաժան կողմերը, բայց համոզված է իր հանճարի պայծառատեսությամբ, որ բուն կյանքը ապրելու համար պետք է հոգին ուղղել դեպի լույսը, մարդկանց էլ օգնել ապրելու՝ դեպի լույսը տանելով:

Բնական է, որ վաղամեռիկ Մեծարենցի անունը միշտ զուգորդվում է մեր մյուս վաղամեռիկ հանճարեղ բանաստեղծ Դուրյանի անվան հետ: Եվ հաճախ համեմատում են նրանց. առաջինի մեջ տեսնում են քնքշություն, մեղմություն, երկրորդի մեջ՝ թափ, ուժ: Մտածում եմ. երկուսն էլ նույնքան քնքուշ են, որքան ուժեղ, խառնվածքներն են տարբեր: Դուրյանի ուժը ներքուստ եռուն է և արտահայտվում է զգացումների մերթ գունագեղ հրավա-

ությամբ, մերթ սևահոն դղրդումով, իսկ վերջին պահին պոռթկաց հրաբխային ժայթքումով՝ իր ճակատագրի ու Աստծո դեմ: Մեծարենցի ուժը իր զարմանալիորեն ամբողջական կենսափիլիսոփայության մեջ է, իր «արբ... ցությամբ» ծիածանվող ապրումների անսահմանության մեջ, նրա համար երջանկություն է «տերևի մը խարշափին մեջ տեսնել տիեզերական զորության գաղտնիքը, ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի անհունը»:

Նրա հոգին ընդգրկում է
բոլոր ձևերն ու երանգներն ամեն
բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
իր մեջ անդրադարձ ծիածանումեն՝
Աստվա՜ծն՝ որ եկավ՝ չե՜ս գիտեր ուրկե՜...

Հախուռն է Մեծարենցը, հզոր. ոչ միայն բանաստեղծական հորդաբուխ բնազդն է խոսում նրա շրթներով, այլև բարձր իմացականությունը, որի մեջ ներդաշնակորեն միաձուլված են խորապես գիտակից արվեստագետն ու իր աշխարհայացքի կենսաբաբախ ճշմարտությամբ տոգորուն իմաստասերը:

Եվ այս բոլորը՝ քսաներկու տարի սպրած պատանո՛ւ հոգում: Հանճարի խորհուրդն է: Ոչ թե սովորական, օրացուցային, այլ կարծես երաժշտական ժամանակով է լցված նրա կարճատև կյանքը. սիմֆոնիա, որ քառասուն րոպեի մեջ մի ամբողջ ներդաշնակ աշխարհ է խտացնում իր ամբողջ ելևէջուն բազմաձայնությամբ:

Բանաստեղծական լուսառատ, սիրառատ արբեցությամբ լի այդ աշխարհը շողշողացել է Վոսփորի գեղաձիծաղ ափերին, բայց արյունոտ սուլթանի բռնապետության խավար մթնոլորտում: Երբ մտածում ես, հենց այդ մթնոլորտում էլ այդպիսի շողշողումը տարօրինակ մի զգացողություն է տալիս, թվում է գրեթե առեղծվածային երևույթ, որի մեջ խորհրդանշական իմաստ ես զգում. իմաստ, որ լայնորեն առնչվում է անհատական, ազգային և ընդհանրապես մարդկային տառապալից ճակատագրի գոյութենական խնդիրների հետ:

Այդ հիվանդ հասարակության մեջ, ուր տիրում էր մահվան ուրվականը, մանավանդ կոտորածների արյունարբու մահվան, որի ճիրանները կախված էին միշտ հայոց գլխին, քսանամյա բանաստեղծը նաև ֆիզիկապես մահացու հիվանդ էր թոքախտով, զգում էր իր մոտալուտ վախճանը: Հենց այդ նախազգացումն իսկ խթան չի՞ եղել արդյոք իր ստեղծագործ հանճարի այդպիսի կանխահաս, պոռթկուն ծաղկման: Ստեղծագործության բուն էությունը, վերջին հաշվով, մահվան հաղթահարումն է, անէության ժխտումը: Եվ ամենահիսկական ստեղծագործությունն է մեծ արվեստը, որի գոյության բուն իմաստը կյանքի հաստատումն ու հավերժացումն է եղել ի սկզբանե, հար ընդմիշտ: Իսկ արվեստագետի խառնվածքը, որ անիմանալի խորհուրդն է անհատականության, ամեն մի ստեղծագործական աշխարհում ուրույն երանգ, ուրույն գունավորում է տալիս կյանքի միշտ նույն հաստատմանն ու հավերժացմանը: Նկատելի է նաև մի երևույթ, որի մեջ գուցե թաքուն օրինաչափություն կա. ստեղծագործական հանճարը, կարծես իր ամբողջ եռանդուժը խտացնելով ծայրահեղ լարվածության մեջ, բուռն պոռթկումով արտահայտվում է ճգնաժամային պահերին, երբ անմիջականորեն է սպառնում մահվան ուրվականը՝ լինի ֆիզիկական, լինի հոգեկան մահվան, սպառնում է մանավանդ նոր ծաղկող կյանքին...

Ուրեմն, որքան էլ առաջին հայացքից զարմանալի թվա, բնական էր այնուամենայնիվ, որ Մեծարենցի հանճարը պոռթկաց այդպես ու շողշողաց անակնկալորեն հասուն, մեծ արվեստի լուսատու զորությամբ: Եվ նույնիսկ ավելի ուժգնորեն, քան մեծ արվեստը կարող է իրագործել սովորական պայմաններում, արդեն տարիքով միայն պատանի բանաստեղծը հաղթահարել է, իր այդ զորությամբ, կեցության դաժան հակասությունների անդունդը տեսնողի տրտմությունը, հաղթահարել է բուն իսկ մահվան ահը, և իր պանթեիստական բնութենապաշտ, լուսապաշտ խառնվածքից էլ մղված՝ կյանքի հրաշքն է երգել ամենահրաշալի ձևով, գոյի տիեզերական խորհուրդի ցնծությամբ է թրթռացել իր ամբողջ էությամբ: Սքանչացման ու սարսափի, հույսի և հուսալքության, ուրախության և տխրության ճակատագրական խառնուրդում, որ վիճակված է ապրել մարդ էակին մանավանդ, նաև առհասարակ բոլոր կենդանի էակներին գուցե, նա բանաստեղծական անկրկնելի դյութանքով ջատագովել է սքանչացումը, հույսը և ուրախությունը, ջատագովել է առանց դույզն ինքնախաբեության, առանց պատրանքների տակ թաքնվելու վաղահաս մահվան ուրվականից, որ սև թևերը տարածում էր իր վրա, կարծես նույնիսկ արհամարհել է նրան և կամ, ավելի ճիշտ, բանաստեղծական իր յուրահատուկ ժպտուն և նույնքան դյութիչ թախիծով է դիտել սարսափը, հուսալքությունը և տխրությունը: Ամեն անգամ իր շրթունքները բացել է ոչ թե ճակատագիրն անիծելու, այլ կյանքը օրհներգելու համար:

Եվ ավելին: Զգալով ամեն մի կենդանի էակի և նույնիսկ բնության տարերքի «արբեցության» թրթիռը, զգալով, թե ինչպես «համբույրներ կուգան հովեն ու ծովեն», թեպետ «լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կմաշի», նա տենչացել է «անանձնական ուրախություն»:

**Անանձնակա՞ն** ուրախություն: Ի՞նչ է դա: Լուսավոր անհունազգացության միստիկ զգացո՞ւմ: Անձի անհուն ընդլայնո՞ւմը, որով հոգին անանձնանում է և ընդգրկում «բոլոր ձևերն ու երանգներն ամեն բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն», համերաշխվում այդ բոլորի հետ և Աստծո ներկայությունն է զգում իր մեջ: Ա՛յդ է: Ա՛յդ է ամենից առաջ, կասի որևէ ոք, որ իր խառնվածքով եղբայր է Մեծարենցին: Բայց նաև, հենց այդ իսկ լինելով, անմիջականորեն համամարդկային մեծ ու խորագույն իմաստ ունի Մեծարենցի անանձնական ուրախությունը. դա համընդհանուր սուրբ համերաշխությունն է մարդկանց միջև, այդպիսով նաև մարդկանց ու բնության միջև, այն մեծագույն համերաշխությունը, որ մարդկության մեծերի երազանքն է եղել միշտ:

Եվ ահա Մեծարենցը երգում է անանձնական ուրախության Աղոթքը, ստեղծելով բանաստեղծական հանճարի ամենագեղեցիկ, ամենասուրբ մի էջը համաշխարհային գրականության մեջ: Այդ զարմանալի Աղոթքը նա կոչել է «Արդի մարդուն Հայր մերը»:

Այո, համաշխարհային գրականության մեջ, որքան փնտրել եմ, չեմ գտել կենսասիրության, մարդասիրության և, ավելի տիեզերականորեն, գոյասիրության մի այնպիսի ոսկեղույս Աղոթք, ինչպես Մեծարենցի այս բանաստեղծությունն է՝ իր հղացքով իսկ գրականության ուղեծրից անդր սլացող մի մարգարեական երկ, որի տասնհինգ եռատող տներից յուրաքանչյուրն սկսվում է նույն սաղմոսային օրհներգական աղերսանքով.

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական...

Բանաստեղծությո՞ւն: Երբեմն նույնիսկ անհավատալի է թվում, որ պարզապես բանաստեղծություն է դա՝ լինի թեկուզ հանճարեղ մարդու ստեղծագործություն: Բիբլիական դարերում պիտի աստվածաշունչ գրություն համարեին այդ քերթվածը, իսկ հեղինակը արքության լուսապսակով պիտի պատկերանար մարդկանց: Դա մարդկային ոգու այն գերագույն արտահայտություններից է, որով Արվեստը իրագործում է իր գերխնդիրը՝ երբեմն կնցության պարապի մեջ անիմաստ գահավիժում թվացող թոհուբոհում հոգու հենարան լինել ու թռիչք տալ մարդուն դեպի կյանքի լիություն, դեպի իդեալ, այս աշխարհում ապրելու հոգեկան «շրջապիյուռ բազմազեղումով»:

Մեծարենցի անմահ հոգու հանդեպ խորին արտաբուխ երախտագիտությամբ ասեմ՝ ինձ համար երջանկություն էր, որ մանկության օրերից հաղորդվեցի հենց իր՝ բանաստեղծի հոգու հրաշալի բազմազեղումին: Դեռ նախակրթարանում, ինը կամ տասը տարեկան, որպես հերթական դաս պետք է «գոց» սովորեինք, այսինքն անգիր անեինք մի փոքրիկ ոտանավոր և պատմեինք, թե ինչ «տեսանք» մեր մտքում, թե ոտանավորը «ինչ ըսել կուզե»: Դա «Հյուղը» բանաստեղծության առաջին տունն էր, որ անգիր անելու էլ կարիք չկար, գրեթե առաջին իսկ ընթերցումից տպավորվեց ու մի պարզ, գեղեցիկ երգի նման, կարծես ինքնիրեն, կրկնվում էր մտքումս.

Դաշտի ճամփու մը վրան,
կամ ըստորոտը լերան,
ուղևորին ժամանման
ըսպասող հյուղն ըլլայի:
Ու գգվանքիս կանչեի
ես ճամփորդներն անժաման,
ու ճամփուն վրա մենավոր,
ու ճամփուն վրա ոսկեման,
եկվորներուն դիմավոր՝
ծըխանիս ծուխն ամպեի:

Օրհնյալ լինի հիշատակը մեր պարոն Արիս Գալֆայանի, մեր ապիտակահեր, գորովալից ուսուցչի, որ թելադրեց մտածել, թե ոտանավորն «ինչ ըսել կուզե»: Մինչև հիմա մնացել է մեջս այն զմայլված զարմանքի զգացողությունը. ոտանավորը հանկարծ հուզեց Հիսուսի պատմած ավետարանական պարզ առակների նման, այնպե՞ս կենդանի տեսա այդ կանչող հյուղը՝ դաշտում երկարող ճամփու հեռանկարում լեռան ստորոտին, տեսա օխացող ծխանի տակ մտերմիկ ջերմությունը սյնտեղ, իսկ այդ հյուղն «ըլլալու» տարօրինակ ցանկությունն էլ հանկարծ զգացի անձնապես, կարծես ինքս լինեի թե՛ կանչողն այնտեղ, թե՛ հոգնած ճամփորդը, որին դիմավորում էի գգվանքով: Դա ոչ միայն հայոց լեզվի դաս էր պարզապես: Չեմ վարանում ասելու, որ դա նման էր սուրբ հաղորդության. բանաստեղծության սկիհից հաղորդվում էի մարդասիրության մեծ խորհուրդին՝ Մեծարենցի ձեռքով, թեկուզ մանկական դեռ կիսագիտակից սքանչացումով միայն:

Այդ հաղորդությունը, խորացող գիտակցությամբ, ոչ թե պարզապես շարունակվեց, այլ մեծարենցյան ապրումների զգլխիչ ծաղկում դարձավ իմ հաջորդ դպրոցում՝ Մելգոնյանում, ուր հատկապես Մեծարենցի պաշտա-

մունք կար ամբողջ պատանեհասակ աշակերտության մեջ, շատերն ունեին մի նվիրական տետրակ, որի մեջ մարգարտաշար տողերով արտագրում էին նրա բանաստեղծությունները: Անշուշտ, ես էլ ունեի: Եվ իմ տետրակում հատուկ «լուսապսակով» էի զարդարել հենց «Ի՞նչ արբեցությամբ» և «Արդի մարդուն Հայր մերը» քերթվածները, որոնք հոգեհարազատ հայտնություն էին եղել ինձ համար՝ լույսի ճամփա դեպի տիեզերական սիրո արբեցությունը, դեպի անանձնական ուրախության աստվածային Հյուղը:

Մինչև այսօր էլ, հակառակ բոլոր հիասթափություններին, և այն պահերին մանավանդ, երբ հոգի չարչրկող թոհուբոհը վիթխարի անհեթեթություն է թվում և խոր տխրության խոնջենքն է ստվերում ճամփաս, իր գըրգանքին է կանչում Հյուղը և դիմավորում իր հաղորդության սկիհով, որից ճառագայթում է միշտ ոսկեղույն այդ Աղոթքը, տուն առ տուն ծավալելով բանաստեղծական այնքա՜ն գեղեցիկ ու խորիմաստ պատկերների բուրմունքը և թարմացնելով հոգին, ընդլայնելով, բարձրացնելով մինչև ավարտական տների մեծ ու վճիտ զգացումը, մինչև պանթեիստական ապրումի անհուն ընդհանրացումը, ուր ամբողջ մարդկությունն ու բնությունն են ընդգրկված.

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
զայն իբր անձրև ցողեմ ամեն դաշտի վրրան,
զայն իբր արև բաշխեմ ամեն հորիզոնի:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
զայն ընդգրկած իդեալին ըլլամ որսկան.
զայն լաստ ըրած՝ ես Լույսերու նավորդն ըլլամ:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՜ւն, համայնական
հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ:

Ճամփաներե՜ն, ու գետերե՜ն, ու դաշտերե՜ն,
անտառներե՜ն, ու լեռներե՜ն, ու ձորերե՜ն,
տանիքներե՜ն, ու տուներե՜ն, ու դուռներե՜ն՝
Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական:

Այս քսաներորդ դարի առաջին իսկ տարիներին, օսմանյան այդ արյունարբու բռնության տակ, ինչպե՜ս է քսանամյա մարգարեն կանխազգացել այն, ինչ արդի մարդու մեծագույն խնդիրն ու տենչն էր դառնալու մեր տագնապահար ժամանակներում, հենց մեր այս օրերին մանավանդ: Արդարև, եթե բանաստեղծական ընկալումով արտահայտեինք այդ մեծագույն խնդրի ու տենչի բուն բարոյական էությունը, պիտի ասեինք՝ անանձնական ուրախությամբ սրբագործված համամարդկային համերաշխության հրամայականն է դա, երբ այլևս, անցյալում երազված ուտոպիստներից հետո, այլ գործնական ճանապարհ չի մնացել փրկության համար՝ համամարդկային կործանման կամ վերածնման շեմին հասած մեր ճգնաժամային դարում,

ուր մահվան ուրվականն իր սև թևերն ապառնալից տարածել է ամբողջ երկրագնդի վրա, իսկ դրա դեմ պետք է ունենալ սերն ու բարիքը ջատագովելու արդար կորովն ու արիությունը՝ հանուն մարդկային ցեղի անմահության:

Բնական է ցավել ու ափսոսալ, որ Մեծարենցը այնքա՜ն շուտ է մահացել՝ ընդամենը քսաներկու տարեկան: Բայց զարմանալիորեն ամբողջական է նրա թողած ժառանգությունը՝ բանաստեղծական մի արտակարգորեն գունագեղ, բուրումնալից, կենսաթրթիռ աշխարհ, կենդանի իրականությունն արտացոլող քնարական ապրումների անսպառ ճշմարտությամբ բաբախուն, երբեք չթառամող պատկերների անհուն նրբություններով հարուստ: Եվ այդ աշխարհը, ինչպես որևէ ամբողջական ստեղծագործություն, իր գագաթնակետն ունի՝ իր ամենացայտուն բարձունքների շարքում: Դա հենց «Արդի մարդուն Հայր մերը» քերթվածն է՝ շողշողուն գագաթ, որից ճառագում են այդ աշխարհի բոլոր բանաստեղծափիլիսոփայական արժանիքները և ավելին՝ մեծ բանաստեղծի լուսաճաճանչ պատգամը:

Ցնցիչ անակնկալ էր ինձ համար, խորախորհուրդ մի հայտնություն, երբ այս մտորումներից հետո տեսա շատ թանկագին մի մասունք, չափազանց նշանակալից՝ ոչ միայն իբրև Մեծարենցի կենսագրության հետ առընչվող իրեղեն արժեք պարզապես, որքան էլ նվիրական լիներ հենց այդ հանգամանքով իսկ, այլև մանավանդ ոգեկան խորք բացահայտող փաստացի մի իրողություն, որ առնչվում է նրա ամբողջ բանաստեղծական աշխարհի հետ՝ ակունքներից մինչև պատգամը: Նրա մոր մատանին էր, որի երեսին մեծատառ փորագրված է երկու տող.

ԿԱՏԱՐԵԱԼ ՍԷՐ
ՄԵՐԺԷ ՋԵՐԿԻԻՂ

Կարելի՞ է արդյոք ավելի կուռ, ավելի սպառիչ բնորոշել Մեծարենցի ամբողջ ստեղծագործության բուն ոգին, ուստի նաև նրա պատգամը: **Կատարյալ սեր** և **մերժիր երկյուղը.** երկու պատվիրան, որոնք պայմանավորում և լրացնում են իրար, կազմելով անքակտելի ամբողջություն, բայց ինձ էական թվաց ու ցնցեց հատկապես երկրորդը, որովհետև հենց երկյուղն է. վախն է խանգարում սիրո կատարելությանը և նույնիսկ լրիվ քայքայում, սպանում է սերը, երկյուղ՝ թե՛ առօրյա հոգեբանական իմաստով, թե՛ մանավանդ փիլիսոփայական լայն ու խոր, գոյութենական իմաստով: Բնական է պատկերացնել, որ մանուկ Միսաքի դիտող, զգայուն աչքը մոր ձեռքին ոչ միայն նկատել է, այլև, ինչպես շատերս ենք արել մեր ծնողներին պատկանող իրերի նկատմամբ, ֆետիշացրել է այդ պատգամող մատանին, որ ամենայն հավանականությամբ, ըստ ամուսնական բարքերի, հոր նվերն է եղել իր կողակցին՝ բարոյական բարձր սկզբունքը որպես հմայախոսք վրան փորագրված: Ուրեմն բնական է նաև ենթադրել, որ իր ժառանգած գենների հետ հայրենի «ինքնին համակ բանաստեղծություն» Բինկյան գյուղից մանկական տպավորությունների հետ, Մեծարենցը դեռ իր ենթագիտակցության մեջ ընկալել է իր ծնողներից այդ պատգամը և հաղորդել աշխարհին՝ իր հանճարեղ ստեղծագործությամբ: